

ԿԱՐԾԻՔ

Վեներա Հովիկի Ավետիսյանի «Էթնոմշակութային դիսկուրսը
Գոհար Մարկոսյան-Կասպերի ստեղծագործությունում» թեմայով՝ ներկայացված
10. 01. 03 - «Ռուս գրականություն» մասնագիտությամբ բանասիրական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության մասին

Ժամանակակից գրականագիտության մեջ շարունակվում են արդիական ու նշանակալից մնալ գրականությունների փոխազդեցությունների, փոխառնչությունների, փոխհարստացման և փոխլրացման, մշակույթների երկխոսության մասին հիմնահարցերը: Այդ առումով հայազգի ուսալեզու գրող Գոհար Մարկոսյան-Կասպերի (1949 – 2015) ստեղծագործության մասին ատենախոսություն գրելը լուրջ հանձնառություն է, քանզի բացի հեղինակի գործերի լուսաբանումից, լայն առումով խիստ կարևոր է, որ այն շաղկապված լինի արդի գրականագիտության մեջ առանձնահատուկ տեղ գրավող մի շարք հիմնահարցերի հետ:

Պաշտպանության ներկայացված ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Առաջին գլխի վերնագիրն է՝ «Этнокультурный дискурс в современной русской литературе», երկրորդինը՝ «Роман Г. Маркосян-Каспер «Пенелопа» в контексте первой волны русского постмодернизма», երրորդինը՝ «Формы и приемы реализации этнокультурного дискурса в поэтике Г. Маркосян-Каспер». Ատենախոսության գլուխներն ունեն ենթաբաժիններ, որոնց միջոցով համակարգված և համակողմանի ներկայացվել են քննվող հիմնահարցերը:

Մենք կսահմանափակվենք ատենախոսության կառուցվածքի մասին այսքանն ասելով, քանզի իմաստ չենք տեսնում գլուխ առ գլուխ վերապատմելու աշխատանքի բովանդակությունը: Կարծում ենք՝ դրա փոխարեն գիտականորեն պատշաճ կլինի անդրադառնալ սույն ատենախոսության բուն էությանը և, մանավանդ, դրա լուծմանն ու լուսաբանմանն ուղղված հեղինակի մոտեցումներին:

Ատենախոսության հետ ծանոթանալուց պարզվում է, որ հեղինակը քաջածանոթ է Գ. Մարկոսյան-Կասպերի գործերին ու տիրապետում է դրանց վերաբերյալ հրապարակի վրա եղած այս կամ այն հարցերին առնչվող ուսումնասիրություններին, դրանցում արծարծված հիմնադրույթներին և այդ ամենը նրբորեն օգտագործել է աշխատանքում՝ դրանց միջոցով վեր հանելով ու լուծում տալով իր առջև դրված խնդիրները: Ատենախոսությունը գրված է մասնագիտական հմտությամբ, նյութի իմացությամբ, աչքի է ընկնում հարցադրումներին տրված պատասխանների համակարգված բնույթով և գիտականությամբ: Այս ամենը վկայում է, որ ատենախոսը

օժտված է հետազոտական-վերլուծական աշխատանք կատարելու կարողությամբ, համոզիչ է իր եզրակացություններում:

Սակայն, ինչպես ատենախոսական յուրաքանչյուր գործում, այս աշխատանքում ևս կան բացթողումներ ու վրիպումներ: Ստորև ներկայացնենք դրանց վերաբերյալ մեր նկատառումները, դիտարկումներն ու դիտողությունները:

1. Կարծում ենք, որ ատենախոսության վերնագիրը՝ «Этнокультурный дискурс в поэтике Гоар Маркосян-Каспер», ամբողջովին չի ընդգրկում և չի ներկայացնում աշխատանքում քննարկվող ու լուսաբանվող բուն նյութը, քանզի ատենախոսության մեջ խնդրո առարկա հիմնահարցի առանցքը հիմնականում «Պենելոպա» վեպն է. դա է հուշում հենց թեկուզ երկրորդ՝ էջաքանակով ամենամեծ (43 էջ) գլխի վերնագիրը՝ 2.1., 2.2., 2.2.1., 2.2.2. և 2.2.3. ենթաբաժիններով հանդերձ (համապատասխանաբար տե՛ս «Ирония в романе Г. Маркосян-Каспер «Пенелопа»», «Интертекстуальность в романе Г. Маркосян-Каспер «Пенелопа»», «Отсылки к русской литературе в романе Г. Маркосян-Каспер «Пенелопа»», «Об интертекстуальных связях романов «Пена дней» Бориса Виана и «Пенелопы» Г. Маркосян-Каспер» և «Шекспировские аллюзии в романе «Пенелопа»»): Բացի այդ, ատենախոսության միայն երրորդ գլխի վերնագիրն է համահունչ աշխատանքի վերնագրին՝ «Формы и приемы реализации этнокультурного дискурса в поэтике Г. Маркосян-Каспер». Նկատենք, որ այս գլխի 3.2. և 3.3. մասերն էլ են՝ «Поэтизация быта в романе «Пенелопа»» և «Античный дискурс в романе «Пенелопа»», անմիջականորեն վերաբերում «Պենելոպա» վեպին: Կարճ ասած՝ ատենախոսության մեջ Գ. Մարկոսյան-Կասպերի մնացյալ գործերին համեմատաբար քիչ անդրադարձ կա, և այդ առումով աշխատանքի վերնագիրը մտորելու տեղիք է տալիս:

2. Գլխավոր խնդիր ունենալով հիմնավորել իր աշխատանքի գիտական արժեքն ու արդիականությունը՝ ատենախոսն աշխատանքում (էջ 7, դա տե՛ս նաև սեղմագրի էջ 3-ում) գրում է. «Несмотря на то, что произведения Г. Маркосян-Каспер достаточно известны как в России, так и зарубежом, (достаточно указать на многочисленные переиздания переводов романов писательницы), целостное литературоведческое исследование творческого наследия Маркосян-Каспер до сих пор не осуществлено». Ասվածից հետևում է, որ ատենախոսության թեմայի մշակման առումով ինչ-ինչ քայլեր արդեն արվել են, սակայն ատենախոսական աշխատանքի հետագա շարադրանքում և ոչ մի տեղ չի նշվում, սակայն հասկացվում է, թե այդ ուղղությամբ ինչ է արվել սույն գործից առաջ: Մեր կարծիքով, ատենախոսության ներածության մեջ պետք է լիներ «Թեմայի մշակվածության աստիճանը» ենթախորագիր, որտեղ հարկ էր գոնե հպանցիկ անդրադարձ կատարվեր նշված հարցին:

3. Գ. Մարկոսյան-Կասպերի մասին անհրաժեշտ էր տալ կենսագրական տեղեկություններ և ոչ թե ատենախոսության մեջ (էջ 4) սահմանափակվել միայն ծննդյան ու մահվան թվականների նշումով, նաև որ բժշկական գիտությունների թեկնածու էր ու ապրել է Երևանում: Հարկ էր հավելյալ տեղեկություններ ևս հաղորդվեր, այդ շարքում նշվեր, թե երբ է տեղափոխվել Էստոնիա, եվրոպական որ երկրներում է եղել,

որտեղ է մահացել և այլն: Այդ ամենը, կարծում ենք, մեծապես կնպաստեր ատենախոսության մեջ շարադրված նյութի՝ տարբեր կտրվածքներով իմաստավորմանը:

4. Տարակուսանք է հարուցում այն, որ ատենախոսության արդիականության հիմնավորումը (տե՛ս էջ 7-ում) դրված է «основные цели и задачи» (տե՛ս էջ 5-ում) և «Теоретико-методологическая основа диссертации» (տե՛ս էջ 6-ում) խորագրերից հետո:

5. Ատենախոսության մեջ. ա) բազմաթիվ են անհա այսպիսի դեպքերը. էջ 4-ում գրված է. «... как замечает Н. Л. Лейдерман ...», բայց հղում չկա. անհասկանալի է մնում, թե որտեղ է Ն. Լեյդերմանը դա ասել: Նույն հեղինակին և նման բացթողմանն է վերաբերում նաև էջ 17-ում (վերևից՝ 11-12-րդ տողերում) գրվածը: Էջ 12-ում նշվում է, որ М. Тлостанова-ն իր մենագրության մեջ անաչարկում է «... назвать «внеациональными», բայց անհայտ է մնում աղբյուրը, քանի որ հղում չկա, էջ 24-ում՝ տեքստում, գրված է՝ «...по словам Д. А. Мельник», բայց տողատակում աղբյուրը նշված չէ, գրականության ցանկում էլ չկա, էջ 27-ում՝ տեքստում, խոսվում է Բ. Պրոխորովայի «Постмодернизм в русской прозе» մենագրության մեջ ներկայացված պոստմոդեռնիզմի մասին, սակայն տողատակում հղում չի տալիս աշխատության ու տվյալ էջերի վրա, նույնը տե՛ս էջ 29-ում, 30-ում, էջ 37-ում՝ խոսվում է համաշխարհային գրականության գործընթացը մեկնաբանող հանրաճանաչ Նորտրոպ Ֆրայի մասին, բայց ո՛չ տողատակում և ո՛չ էլ գրականության ցանկում չկա որևէ հղում այս հեղինակի աշխատության վրա, էջ 43-ում խոսք է գնում Մ. Լիպովեցկու հարցադրման մասին, բայց դարձյալ նրա գործին հղում չկա, էջ 77-ում՝ վերջին պարբերությունում, գրված է՝ «Согласно Н. Бердяеву», բայց հղում չկա նրա աշխատության վրա, գրականության ցանկում էլ չկա, նույնը էջ 80-ում է՝ 107-րդ ծանոթագրության մեջ, «Согласно Шкловскому», բայց դարձյալ համապատասխան հղում չկա աշխատությանը, էջ 96-ում՝ 144-րդ ծանոթագրության մեջ, գրված է՝ «Эпштейн пишет ...», սակայն նույն իրողությունն է՝ հղում չկա, որ իմանանք՝ որտեղ է նա դա գրում, բ) բերված բազմաթիվ մեջբերումների աղբյուրները նշված չեն. տե՛ս, օրինակ, էջ 28-ում, 36-ում, գ) կան դեպքեր էլ, երբ աղբյուրի հեղինակն ու գործի վերնագիրը նշված են, սակայն էջը նշված չէ (բնորոշ օրինակները տե՛ս էջ 29-ում, 33-ում, 95-ում, 106-ում, դ) էջ 99-ում՝ ծանոթագրություն 151-ում, բերված է 3 տողանոց անգլերեն տեքստ՝ առանց աղբյուրի և էջի նշման:

6. Նկատելի են անուն-ազգանունների տարբերություններ. այսպես, էջ 4-ում՝ տեքստում, Тодорова-ի անվան առաջին տառը Д է, իսկ նույն էջի տողատակում՝ И: Էջ 20-ում՝ տեքստում, գրված է՝ О. М. Ретвикаина, նույն էջի տողատակում՝ О. Ретивкина և այլն:

7. Ատենախոսը պատկերացում չունի գիտական ապարատի ներկայացման ձևի մասին: Այն կազմված է անփույթ. ա) հայտնի իրողություն է, որ եթե գիրքը, հոդվածը, աշխատությունը տվյալ հեղինակի միակ գործն է, ապա առաջին անգամ այն տրվում է ամբողջությամբ՝ անուն, ազգանուն, վերնագիր, հրատարակության վայրը, թիվ, իսկ հաջորդ բոլոր տեղերում նշվում է՝ Указ. соч. Այս սկզբունքն աշխատանքում

համարյա չի պահպանվել (տե՛ս, օրինակ, էջ 22-ում, 23-ում), բայց որոշ տեղերում (տե՛ս, օրինակ, էջ 85, 86) տրված է վերը նշված սկզբունքով, բ) ընդունված կարգ է, որ տվյալ էջի տողատակում եթե նույն գիրքը, աշխատանքը, հոդվածը իրար տակ կրկնվում են, ապա պետք է նշվի՝ Там же: Այս սկզբունքը ևս որոշ տեղերում պահպանված է (տե՛ս, օրինակ, էջ 13-ում, 85-ում), իսկ բազմաթիվ էջերում (տե՛ս, օրինակ, էջ 13-ում, 63-ում, 91-ում) պահպանված չէ, գ) Սանկտ Պետերբուրգի կրճատ գրելու ընդունված ձևը СПб.-ն է, բայց աշխատանքում այս առումով խառնաշփոթ է. մեկ սա է (տե՛ս, օրինակ, էջ 3-ում, 32-ում), իսկ բազմաթիվ տեղերում՝ СПб. է (դրա խոսուն վկայությունը վերը նշված էջ 3-ում է և այլուր), դ) Таллинн քաղաքի անունը որոշ տեղերում տրված է ամբողջական (տե՛ս, օրինակ, էջ 32-ում, 44-ում, 69-ում, 70-ում), բազմաթիվ այլ տեղերում էլ կրճատ է՝ Т (տե՛ս, օրինակ, էջ 113-ում, 116-ում և այլն), ե) գրականության վերնագիրը մի տեղ լրիվ է, այլ տեղերում և «Օգտագործված գրականության ցանկ»-ում տրված է բացթողումով և կրճատ. տե՛ս, օրինակ, էջ 70-ում՝ տեքստում, նշված Մ. Արտեմևի հոդվածի վերնագիրը տողատակում հղված է բացթողումով՝ չկա «творчество» բառը: Տե՛ս նաև էջ 35-ում և 36-ում՝ տեքստում և տողատակում, գրականության ցանկում (էջ 114-ում) հղված Մ. Բոյմի գրքի վերնագիրը, էջ 50-ի 69-րդ ծանոթագրության մեջ և էջ 113-ում՝ գրականության ցանկում, բերված Օ. Մանդելշտամի Երկերի ժողովածուի հղման ձևերը, նաև էջ 95-ում՝ տեքստում, և էջ 115-ում՝ գրականության ցանկում, Կ. Էկոնենի գրքի վերնագիրը, գ) Ա. Ժոլկովսկու գրքի հրատարակման թվականը տեքստում այլ է (տե՛ս էջ 44), իսկ գրականության ցանկում՝ այլ (տե՛ս էջ 114), է) տողատակերում կան հղված հեղինակներ, խոսք է գնում նրանց աշխատությունների մասին, որոնք, սակայն, գրականության ցանկում չկան (տե՛ս, օրինակ, էջ 30-ում), ը) մի շարք դեպքերում մեջբերման կոնկրետ էջը կամ էջերը նշելու փոխարեն բերվում են հոդվածի ընդհանուր էջերը. այսպես է, օրինակ, էջ 15-ում (Ու. Բախտիկիրենայից բերվածը), էջ 39-ում (Ս. Բիչենկոյից բերվածը), էջ 42-ում՝ Մ. Էպշտեյնի գործի վրա հղումը, նույնը տե՛ս էջ 55-ում՝ Վ. Շկոլովսկու կտրվածքով, թ) որոշ դեպքերում կասկածելի են մեջբերման՝ տողատակերում հղված էջերը. այսպես, էջ 3-ում հղված է Մ. Ավերինցևի գրքից բերված մեջբերման էջը՝ 480: «Օգտագործված գրականության ցանկ»-ում բերված այս գրքի ընդհանուր էջաքանակն էլ է 480: Էջ 4-ում հղված է Ա. Ստոլյարովի հոդվածից մեջբերման էջը՝ 28: Սակայն «Օգտագործված գրականության ցանկ»-ում այդ հոդվածը սկսում է էջ 29-ից և այլն:

Գիտական ապարատի վերաբերյալ այլ թերություններ ու բացթողումներ էլի կան, սակայն սահմանափակվենք այսքանով:

8. Ատենախոսության էջ 5-ում նշվում են Գ. Մարկոսյան-Կասպերի վերջին գործերը՝ «Memento mori»-ի և «Париж был так прекрасен», սակայն չկան դրանց գրքերով հրատարակման ո՛չ վայրերը, ո՛չ էլ թվերը: Բացի այդ, դրանք արտացոլված չեն «Օգտագործված գրականության ցանկ»-ում:

9. Ատենախոսության մեջ՝ մեջբերումներում, բազմաթիվ են ընդգծումները, սակայն և ոչ մի տեղ նշված չէ, թե դրանք ո՞ւմն են, արդյո՞ք հեղինակինն են, թե՞՝ ատենախոսինը (տե՛ս էջ 45, 46, 47, 49, 52, 53, 81 և այլն):

10. Աշխատանքը լեցուն է տեխնիկական բնույթի բազմատեսակ ու բազմաթիվ սխալներով, բացթողումներով ու վրիպակներով. ա) դրա տիտղոսաթերթին ատենախոսության վերնագիրը դրված է չակերտների մեջ, բ) բովանդակության մեջ նշված չէ «Заключение» վերնագիրն ու դրա էջը, գ) աշխատանքի գլուխների վերնագրերը մեծատառով են, իսկ «Заклучение» և «Список использованной литературы» վերնագրերը՝ փոքրատառերով, դ) աշխատանքի առաջին գլխի վերնագրից հետո դրված է վերջակետ, երկրորդում և երրորդում դրված չէ, ե) չկա միօրինակություն. օրինակ՝ էջ 55-ում մեծատառով գրված է՝ «Нир-ванна», իսկ էջ 81-ում՝ նույնը փոքրատառով, էջ 80-ում չակերտների մեջ և փոքրատառով գրված է՝ «мерседес», իսկ էջ 81-ում՝ առանց չակերտների և մեծատառով՝ Мерседес, զ) որոշ տեղերում պարբերությունները իրարից հեռու են (տե՛ս, օրինակ, էջ 53-ում, 65-ում), է) տողատակերում պահպանված չէ համակարգչային շարվածքի ընդունված ձևը, կա համակարգչային շարվածքի խոտան և այլն (տե՛ս, օրինակ, էջ 24-ում, 25-ում, 83-ում, 94-ում, 97-ում, 100-ում, 115-ում, 118-ում, 119-ում), ը) բազմաթիվ տեղերում դրված չեն բացվող կամ փակվող չակերտները, փակագծերը, վերջակետերն ու ստորակետերը, հանդիպում են սրբագրական վրիպակներ. դրանք աշխատանքում այնքան լեցուն են, որ էջերը չենք նշում:

11. Ուզում ենք հասկապես շեշտել հետևյալը. ատենախոսությունն իր բնույթով այնպիսին է, որ երբեմն դրա հեղինակը պետք է ցուցաբերեր պատմական, ավելի լայն՝ հասարակագիտական գիտելիքների պաշարը. այսպես, աշխատանքի մի շարք էջերում (տե՛ս, օրինակ, էջ 45-ում, 57-ում) նշվում է, որ 1990-ական թվականների Հայաստանում մթի, ցրտի, ջրի ու լուսավորության բացակայության տարիներ էին (տե՛ս նաև՝ սեղմագրի էջ 12-ում, 14-ում). հարկ էր, սակայն, կոնկրետացնել ժամանակահատվածը. մեզնից շատերն ապրել են այդ տարիներին և գիտեն, որ դա վերաբերում է մինչև 1990-ական թվականների կեսերին:

12. Վերն ասվածը վերաբերում է նաև Ղարաբաղյան շարժման, Ղարաբաղյան պատերազմի, 1915 թ. և Շուշիի կոտորածի մասին հիշատակումներ կատարելիս, հպանցիկ խոսելիս (տե՛ս, օրինակ, էջ 4-ում, 48-ում, 49-ում, 57-ում, 58-ում): Չծավալվելով՝ նկատենք, որ աշխատանքը մեծապես կշահեր, եթե ատենախոսը գտներ ձևը ու դրանց վերաբերյալ, թեկուզ տողակատում, տար որոշակի, համապատասխան բացատրություններ ու պարզաբանումներ:

13. Աշխատանքում բազմաթիվ են «Электронный ресурс»-ի վրա հղումները. տարօրինակն այն է, որ պարզվում է՝ ատենախոսը դրանցից օգտվել է նույն օրը՝ 10.10.2022-ին (այդպես նշված է ողջ տեքստում. տե՛ս էջ 5-ից սկսած):

14. Ատենախոսության մեջ Մոսկվայում հրատարակվող «Литературная газета»-ից (տե՛ս, օրինակ, էջ 17), «Вопросы литературы»-ից (տե՛ս, օրինակ, էջ 10), «Вопросы философии»-ից (տե՛ս, օրինակ, էջ 78) բերված հղումները կատարվել են

հենց այդ պարբերականների վրա, սակայն տարօրինակ ու զարմանալի է, որ Երևանում հրատարակվող «Голос Армении»-ից և «Литературная Армения»-ից բերվողները հղվում են «Электронный ресурс»-ի վրա (տե՛ս, օրինակ, էջ 5-ում, 25-ում, 117-ում): Այսինքն՝ ատենախոսը իրեն նեղություն չի տվել դրանք նայել բնօրինակով: Ի դեպ, թերթերի, պարբերականների անվանումները, ընդունված կարգի համաձայն, պետք է դրվեին չակերտների մեջ, նաև պետք է նշվեին դրանց հրատարակման վայրերը:

15. Էջ 90-ում հանդիպում ենք գոնե մեզ համար արտառոց մի դեպքի. բերվում են մեջբերումներ, նշվում են հատորն ու էջը՝ т. 4, стр. 7, т. 4, стр. 284 և այդպես շարունակ, սակայն անհասկանալի է մնում, խոսքը ի՞նչ հատորների մասին է:

16. Մի քանի խոսք «Օգտագործված գրականության ցանկ»-ի մասին (նկատենք, որ մեր խոսքի շարադրանքից ելնելով՝ այդ մասին նախորդ դիտարկումներում էլ է անդրադարձ եղել). ա) կան բազմաթիվ դեպքեր, երբ տեքստում և տողատակում հեղինակներ ու աշխատանքներ են նշված, որոնք, սակայն, գրականության ցանկում չկան (տե՛ս, օրինակ, էջ 16-ում, 24-ում, 37-ում, 77-ում), բ) էջ 44-ի տողատակում Ա. Ժոլկովսկու գրքի հրատարակման թիվ է նշված 1994-ը, իսկ ցանկում՝ 1992-ը, գ) էջ 116-ում Ե. Դեմիչևայի ատենախոսության սեղմագրի մասին տվյալները դրված են «Հոդվածներ» խորագրի ներքո, դ) նույն՝ էջ 116-ում, Ս. Բելոբրովցևայի հոդվածի վերնագիրը ներկայացված է աղճատված. չկա Գոհարի անուն-ազգանունը, որն ամբողջությամբ տրված է էջ 87-ում, էջ 98-ում՝ տեքստում էլ, հոդվածի վերնագրում նշված է Գոհարի անվան առաջին տառը, իսկ տողատակում հոդվածի վերնագիրը դրված է չակերտների մեջ, ե) մի խառնաշփոթ է Ու. Էկոյի հոդվածի հղումների կտրվածքով. այսպես, էջ 28-ում բերված են նրա հոդվածի վերնագիրն ու էջը՝ «Заметки на полях «Имени розы», Сс. 88-104, նաև՝ С. 451, էջ 93-ում՝ տեքստում, «розы» բառը գրված է մեծատառով, իսկ էջը՝ 597, «Օգտագործված գրականության ցանկ»-ում էլ՝ էջ 119-ում, հոդվածի էջեր են նշված՝ 88-104-ը, գ) էջ 101-ում՝ վերնից առաջին տողում, փակագծերի մեջ նշված է՝ Presto 2002, 137, սակայն գրականության ցանկում դա արձանագրված չէ, է) էջ 102-ում՝ ծանոթագրություն 154, Ս. Հոլիի հոդվածի հղման էջը նշված է 292, սակայն գրականության ցանկում՝ էջ 120-ում, հոդվածի էջերն են 223-290, ը) պահպանված չէ այբբենական կարգը (տե՛ս էջ 114-115-ում), թ) գրքերը նշելիս հիմնականում տրված են նաև հրատարակչության անվանումները (ի դեպ, ատենախոսության տողատակերում պարտադիր չէր դրանք նշել) և գրքի էջերի քանակը, բայց անգլիալեզու գրականությունը ներկայացնելիս դա երբեմն պահպանված չէ (տե՛ս էջ 119-120), ժ) մի շարք հեղինակների գործեր գրականության ցանկում հղված են, բայց տողատակերում դրանք նշված չեն. տե՛ս, օրինակ, Կրեմերի (անվան սկզբնատառը գրված չէ), Ա. Յիրենդորոժինայի, D. Fokkema-ի, Ch. Russel-ի գործերը:

Մի քանի խոսք սեղմագրի վերաբերյալ:

1. Դրա շապիկի վրա գրված «ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ»-ից առաջ պետք է գրվեր «Հայաստանի Հանրապետություն» կամ «ՀՀ»,

ինչպես գրված է ռուսերեն տեքստում: Ասվածը վերաբերում է նաև սեղմագրի երկրորդ էջում գրվածին. հայերենը և ռուսերենը պետք է համարժեք լինեն:

2. Աշխատանքի վերնագրում գրված «поэтика» բառը թարգմանված է «ստեղծագործությունում», որը, կարծում ենք, հայերենում ամբողջական չի արտահայտում այդ բառի իմաստը. միգուցե, արժեր թողնել «պոետիկա» բառը կամ հայերենում նշվեր՝ «ստեղծագործության մեջ», կամ էլ՝ «ստեղծագործական աշխարհում»: Ի դեպ, վերնագրում անկա «дискурс» բառն էլ թարգմանված չէ:

3. Սեղմագրի 3-րդ էջի հենց սկզբում անհրաժեշտ էր գրել, որ Գոհար Մարկոսյան-Կասպերը հայագրի ռուսալեզու գրող է, նշվեր ծննդյան ու մահվան թվերը: Այնինչ միայն գրված է՝ Г. Маркосян-Каспер, անունն էլ՝ կրճատ: Ասվածը վերաբերում է նաև հայերեն ու անգլերեն ամփոփագրերին, որտեղ դրանք ևս նշված չեն:

4. Ինչպես ասվեց ատենախոսության մասին խոսելիս, սեղմագրում ևս պետք է առանձին ենթախորագրով նշվեր թեմայի ուսումնասիրության, մշակվածության աստիճանի մասին, հետո նոր գրվեր՝ «գրականագիտության մեջ» Գ. Մարկոսյան-Կասպերի ստեղծագործության մասին ամբողջական որևէ աշխատություն չկա:

5. Նկատելի է, որ սեղմագրի վրա խմբագրական զգալի աշխատանք է կատարվել, բայց ակներև են ատենախոսության տեքստի հետ դրանց տարբերությունները, նաև՝ տեքստերի, պարբերությունների հետուառաջ լինելը: Բերենք ասվածը հավաստող մի շարք բնորոշ օրինակներ: Այսպես, էջ 4-ում՝ վերնից 6-րդ տողում, մեջբերում է, գրված է՝ то, что... писатель». Վերջում չակերտը փակվում է, բայց то-ից առաջ չակերտ չի բացվել (հմմտ. ատենախոսության էջ 3-ում գրվածի հետ): Ատենախոսության էջ 5-ում «цели и задачи»-ի տակ՝ 2-րդ կետում, եղած «философско-интеллектуальной, ментально-психологической» բառակապակցությունը սեղմագրի էջ 4-ի նույն կետում չկա: Սեղմագրի էջ 5-ում գրված ենթավերնագիրը՝ «Общая методология исследования», ատենախոսության էջ 6-ում ձևակերպված է հետևյալ կերպ՝ «Теоретико-методологическая основа диссертации»: Սեղմագրի նույն՝ 5-րդ էջում, «При написании ...» բառակապակցությունով սկսվող պարբերությունը պետք է լիներ «Объектом исследования ...»-ով սկսվող պարբերությունից առաջ, քանի որ ն՝ բովանդակային, և՛ իմաստային առումով կապվում է ուսումնասիրության մեթոդի հետ (հմմտ. ատենախոսության էջ 6-ի հետ): Էջ 10-ում՝ վերնից 6-րդ տողում, «советского мифа» բառակապակցությունը դրված է չակերտների մեջ, այնինչ ատենախոսության մեջ (տե՛ս էջ 30-ում) չակերտներ չկան: Սեղմագրի էջ 12-ի 1-ին պարբերության նյութը դրված է էջ 11-ի նյութից հետո, այնինչ ատենախոսական աշխատանքում՝ էջ 45-ում, ճիշտ հակառակն է: Էջ 17-ի վերջին տողում գրված «на стыке» բառերն ատենախոսության մեջ (էջ 106-ում) ընդգծված են, իսկ այստեղ՝ ոչ: Էջ 19-ում՝ ներքևից 12-րդ տողում, գրված «завершенности» բառը նույն կոնտեքստում՝ ատենախոսության էջ 110-ում՝ ներքևից 6-րդ տողում, «незавершенности» է: Չձավալվենք՝ նման տարբերություններ սեղմագրի ու ատենախոսության միջև էլի կան, բայց բավարարվենք նշվածներով:

6. Կարծում ենք՝ և՛ բովանդակային, և՛ իմաստային առումներով, և՛ սեղմագրում (էջ 7) և՛ ատենախոսության մեջ (էջ 10) իմաստ չունեի հատուկ ներկայացնել «Основные положения, выносимые на защиту» ենթավերնագիրը՝ շարադրանքով, քանի որ դրանից առաջ «Цели и задачи» ենթախոսագրով հիմնահարցը ներկայացված է (կարելի էր նաև, եթե այդքան անհրաժեշտ էր դա շեշտել, միացնել վերջինիս հետ):

7. Սեղմագրի էջ 5-ում ատենախոսը գրում է՝ «Методологические, теоретические и информационные основы исследования включают в себя основные подходы к изучению новейшей русской литературы, отраженные в трудах таких ученых как ...», ապա թվարկում է 19 անուն: Սակայն անհայտ է մնում, թե այդ հեղինակները որտեղ են իրենց տեսակետները հայտնել, քանզի տողատակում բերված չեն նրանց աշխատությունները: Ի դեպ, ատենախոսության մեջ էլ է (տե՛ս էջ 6-ում) ատենախոսը նման կերպ վարվել, նույնիսկ տողատակում չի էլ նշել, որ այդ գործերը տե՛ս «Օգտագործված գրականության ցանկ»-ում: Նկատենք նաև, որ թվարկված հեղինակներից Ի. Յուկինայի աշխատությունն այդ ցանկում չկա: Էջ 10-ում բերված են պոստմոդեռնիզմին տրված Պրոխորովայի (անվան սկզբնատառը նշված չէ) դասակարգումները՝ 6 կետով, սակայն աղբյուր չի նշվում (նույնը տե՛ս ատենախոսության էջ 30-ում): Էջ 15-ում խոսվում է Էլեն Շոուոլտերի՝ առաջ քաշած «կանանց գրականության» ուսումնասիրման մեթոդի մասին, սակայն առանց աղբյուրի նշման (նույնը նաև ատենախոսության էջ 97-ում է, «Օգտագործված գրականության ցանկ»-ում էլ գործը նշված չէ): Էջ 17-ում խոսվում է Ֆուկոյի (անվան սկզբնատառը նշված չէ) կոնցեպցիայի մասին՝ առանց աղբյուրի հղման (տե՛ս նաև ատենախոսության էջ 105-ում): Ի դեպ, այս հեղինակի գործը չկա նաև «Օգտագործված գրականության ցանկ»-ում:

8. Սեղմագրում առաջին գլխի մասին խոսելիս նշված չէ, որ ատենախոսության մեջ այն ունի մեկ՝ աշխատանքի համար շատ կարևոր, ենթավերնագիր՝ «1.1. К проблеме определения русскоязычной литературы», ըստ այդմ էլ՝ դրանում զետեղված բուն նյութի (տե՛ս էջ 14-26) մասին ամենևին խոսք չկա: Միայն բերված են ատենախոսության այդ գլխի ներածական մասից (վերնագիր չունի. տե՛ս էջ 12-14) վերցված երեք պարբերություն-հատված ու դրանով սահմանափակվել:

9. Գլուխ երկրորդի սկզբնամասում ընդհանուր գծերով (8 տող) շարադրված են գլխում ներկայացվելիք հիմնահարցերը, առանց նշելու, որ գլուխը բաղկացած է 2.1., 2.2., 2.2.1., 2.2.2. և 2.2.3. մասերից. դրանց վերնագրերը նշված չեն և շարադրանքում մի ենթաբաժնից մյուսի անցումն անհասկանալի է դառնում: Սեղմագրի էջ 9-ից 13-ի նյութը շարադրված է ատենախոսական աշխատանքի էջ 27-69-ում ներկայացված տեքստերի հատվածական մեջբերումներով, որը, ի վերջո, հանգեցրել է նրան, որ վերջին՝ 2.2.3.-ի տակ եղած նյութի մասին (տե՛ս ատենախոսության էջ 65-69-ում) բացարձակապես խոսք չկա: Էջ 13-ի առաջին պարբերությունը՝ «В указанном разделе ...» -ից չի հասկացվում, թե որ ենթաբաժնի մասին է խոսքը, քանի որ, ինչպես վերը նշվեց, գլխի ենթամասերն առանձին-առանձին ներկայացված չեն: Համանման դեպքերի հանդիպում ենք սեղմագրի այլ էջերում ևս (տե՛ս էջ 14-ում, 16-ում):

10. Գլուխ երրորդում էլ պատկերը նույնն է, ինչ առաջին և երկրորդ գլուխներում. չորս ենթավերնագրերի տակ շարադրված նյութի մեկից մյուսի անցումը չի երևում, քանի որ, կրկնենք, ենթամասերը վերնագրերով առանձնացված չեն:

11. Սեղմագիրը գիտական ապարատ համարյա չունի, եղածն էլ՝ թվով 6-ը, խորհելու տեղիք են տալիս: Այսպես, էջ 4-ում ծանոթագրություն 1-ի տակ նշված Ս. Ավերինցի մենագրության էջի վերաբերյալ նշվեց աստենախոսության գիտական ապարատի մասին խոսելիս, չկրկնենք: Էջ 14-ում Ա. Գենիսի աշխատանքից բերված մեջբերման կոնկրետ էջի նշման փոխարեն հղված են դրա ընդհանուր էջերը՝ 97-126 (նույնն է նաև աստենախոսության էջ 78-ում՝ ծանոթագրություն 103-ում): Էջ 16-ում. ա) Ի. Բելոբրովցևայի հոդվածից բերված մեջբերման կոնկրետ էջը (տե՛ս ծանոթագրություն 6) նշված չէ (բացի այդ, վերը բերված մեջբերումը չակերտով չի փակվում. նույնն է նաև աստենախոսության էջ 98-ում՝ ծանոթագրություն 149-ում), բ) սեղմագրի նույն՝ էջ 16-ում, Կ. Էկոնենի աշխատանքից բերված մեջբերման վրա հղում չկա, ըստ այդմ՝ տողատակում աղբյուր նշված չէ:

12. Սեղմագրում չկա գրելաձևի միօրինականություն. դա նշվեց նաև աստենախոսության մասին խոսելիս: Որպես բնորոշ օրինակ բերենք հետևյալ բառակապակցությունը. էջ 3-ում առանձին-առանձին, չակերտների մեջ, փոքրատառով գրված է՝ «своего» и «чужого», էջ 4-ում՝ առանց չակերտների, փոքրատառերով, ուղղահայաց գծով իրարից առանձնացված՝ своего / чужого, նույն էջում՝ 2 բառն էլ միասին վերցված են չակերտների մեջ՝ «своего и чужого», էջ 7, 18-ում դրանք առանձին-առանձին, մեծատառերով ու չակերտների մեջ են դրված՝ «Своём» и «Чужом», նույն՝ էջ 18-ում, բերված են առանց չակերտների, մեծատառերով և բաժանված ուղղահայաց գծով՝ Свое / Чужое.

13. Սեղմագրում 3 էջ (էջ 18-20) նվիրված է «գլխավոր» եզրակացություններին, որը, կարծում ենք, տվյալ պարագայում մեծ շոայլություն է:

14. Դառնանք աստենախոսության թեմայով հրատարակված թվով 7 հոդվածներին. անշուշտ գովելի է, որ դրանցից երկուսը՝ 4-րդը և 5-րդը, տպագրվել են արտերկրում: Սակայն հարկ է ասել, որ հրապարակումների ցուցակը կազմված է անփույթ: Այսպես՝ ա) հ. 1-ում չպետք է նշվեր աստենախոսի անուն-ազգանունը, բ) հ. 2 ու հ. 3-ում նույն ամսագրում և նույն թվականին տպագրված համարների հերթագայությունը խախտված է, գ) ցուցակում խախտված է նաև հոդվածների տպագրության ժամանակագրական հերթագայությունը. տե՛ս հ. 4, հ. 5-ն ու հ. 6-ը, դ) չմանրամասնելով՝ նկատենք՝ կան սրբագրական վրիպումներ, չկա կետադրական միօրինակություն:

Այս դիտարկումներով ուզում ենք աստենախոսին հուշել, որ նա գիտահետազոտական իր հետագա աշխատանքում լինի անչափ ուշադիր, թվում է, թե «մանր» թվացող նման հարցերում անզամ:

15. Էջ 22-ում՝ «Ամփոփագրում» (կարծում ենք, ճիշտ կլիներ վերնագրել՝ «Ամփոփում»), խոսք չկա աստենախոսության կառուցվածքի մասին, այն է՝ անզամ

թվարկված չեն գլուխների ու ենթամասերի վերնագրերը, որոնցից հայերենին և անգլերենին տիրապետողները կկարողանային զոնե պատկերացում կազմել աշխատանքի ընդհանուր բովանդակության մասին: Դրա փոխարեն 1,5 էջի չափով ներկայացված են եզրակացություններից «մի քանիսը»:

Նկատենք, ինչպես նշված է ատենախոսության մեջ (էջ 10) և սեղմագրում (էջ 6), աշխատանքը փորձաքննության է ենթարկվել 4 կազմակերպությունում, որը, կարծում ենք, խրախուսելի և գովելի է: Բայց թե ինչու են այդքան քննարկումներից հետո առկա վերը բերված ակնհայտ վրիպումները, դա, մեղմ ասած, անհասկանալի է:

Ամփոփենք. Վեներա Ավետիսյանի ատենախոսության ու սեղմագրի մասին վերը նշված մեր դիտարկումները, նկատառումները և դիտողությունները (որոնց մեծ մասին, ի դեպ, պետք է տիրապետի գիտության ասպարեզ ոտք դնողը), ճիշտ է, ստվերում, միգուցե նաև՝ էականորեն ազդում են ատենախոսության ընդհանուր որակի վրա, բայց դրանք հեշտությամբ կարելի է շտկել աշխատանքը՝ որպես մենագրություն՝ հրատարակելիս, իսկ դրա անհրաժեշտությունը կա: Հուսանք, որ այն կտպագրվի՝ դառնալով հայ-ռուս պատմամշակութային կապերի հարատևությունը հավաստող մերօրյա մի հուշարձան:

Ըստ այդմ՝ արձանագրենք. Վեներա Հովիկի Ավետիսյանի «Էթնոմշակութային դիսկուրսը Գոհար Մարկոսյան-Կասպերի ստեղծագործությունում» ատենախոսական աշխատանքը համապատասխանում է նրա հայցած գիտական աստիճանի պահանջներին, առավել ևս թեմային առնչվող հրապարակումներն էլ արտացոլում են ուսումնասիրության հիմնական դրույթները: Ուստի միջնորդում ենք ՀՀ ԳԱԱ Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտում գործող գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդին՝ նրան շնորհելու 10. 01. 03. - «Ռուս գրականություն» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Անուշավան Զաքարյան

Բանասիրական գիտությունների դոկտոր,

ՀՀ ԳԱԱ «Պատմաբանասիրական հանդես»-ի գլխավոր խմբագիր

Ա. Զաքարյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչական-արտադրական

ՊՓԲԸ-ի գլխ. տնօրեն

Վաչե Հովակիմյան

14 նոյեմբերի 2023 թ.

